

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԿԵՆՈՐԻՆԻ ՏԱՐԻ

ՄԵԿԵՆ

Տարեկան գինը 10 ռուբլի. 45 օտարականը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мекен».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ օրհորհրդի).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՒՄԱՆԻՍՏԻԿԱՆ

Ընթացիկ վիճակագրութիւն. — Ներքին. Տե-
ստիկութիւն. Հայ-վրացական արձանագրութիւն-
ների գիտական հրատարակութիւնը. Նամակ
երկուսից. Նամակ խմբագրութեան. Նամակ
խմբագրութեան. Ներքին. — ԱՄՏԱՐԻՆ
ՏԵՍՏԻԿԱՆ. Գերմանացի կինը և ընտանե-
կան իրաւունքը. Արաւելիս լուրեր. — ՀԵՐԵՎԱՆԻ-
ՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Շարժե-չարժ.

ԸՆԹԱՑԻԿ ՎԻՃԱԿԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Մեր լրագրում տպւած տեղեկութիւն-
ներից մեր ընթերցողները գիտեն, որ Իս-
ճակի նահանգի մի քանի տեղերում և ա-
ռաւելիս լուրերում և Զանգեզուրի գա-
ւառներում տեղի ունեցան սարսափելի
կարիւղանքներ, որոնք այնքան փայտե-
րեցին, որ գիւղացիները ստիպւած են
կամ արտերը նորից հերկել և ցանել կորեկի
և կամ բոլորովին թողնել նրանց անա-
յայ տարի: Ուրիշ տեղերից ստացած մեր
տեղեկութիւնները աննպաստ չեն ընդհան-
րապէս, թէ և առանձին դժբաղդ դէպքեր
եղել են և ուրիշ գաւառներում, օրինակ Ար-
գահանի, Գորու, Թելաւի գաւառներում:

Տարւոյ բերքի մասին հեշտ տեղեկու-
թիւններ ունենալը շատ կարեւոր է թէ
իրանց գիւղացիների և թէ ղեկավարող
շրջանների համար: Այդ տեղեկութիւնների
հիման վրա միայն կարելի է գաղափար
կազմել տեղի ունեցած աղէտների մասին
և միջոցներ որոնել նրանց դէմ մարտնչու-
համար: Եթէ գիւղերը շատ վաղ գրկվել
են իրանց ցանքներից, կարելի է օգնել
նրանց, որ նրանք նորից սերմանեն իրանց
արտերը. եթէ աղէտը շատ մեծ ծաւալ է
ստացել, կարելի է հարց յարուցանել
նպաստներ տալու մասին նրանց հացով ու
փողով և միջոցներ ձեռք առնել բանալու
կարօտեալների համար աշխատանքի նոր
աղբիւրներ:

Մինչև այժմ մեր երկրում դեռ չէ կազ-
մակերպվել մի այնպիսի ընթացիկ վիճա-
կագրութիւն, որ տարւոյ բերքի մասին
տեղեկութիւններ ժողովելին կանոնաւոր
կերպով: Մի քանի անգամ վիճակագրու-
թիւն կազմակերպելու հարցը յարուցված
է կողմաներ Գիւղատնտեսական ընկերու-
թեան մէջ և նոյն իսկ մի փոքր քայլ ար-

վեց նրա իրաւորութեան համար, բայց
առհասարակ հիմնաւորապէս ոչինչ չէ ար-
ված մինչև այժմ:

Այն բարձրագոյն խորհրդակցութիւնը, որ
այժմ գործում է մայրաքաղաքում, ընտե-
րեան առնելով այդ հարցը, եկաւ այն
եզրակացութեան, որ այլ ևս անկարելի է
յետաձգել այդ կարեւոր գործի կազմակեր-
պութիւնը, ուստի որոշեց առաջարկել
ներքին գործերի մինիստրութեան անյա-
պաղ ձեռնարկել նրա իրաւորութեան: Եւ
ներքին գործերի մինիստրութեան ներկա-
յացողները բոլորովին հաւանութիւն
տուին այդ առաջարկութեան, ցանկու-
թիւն յայտնելով, որ պետական գանձա-
րանը առաւ քանայ իր միջոցները այդ
հական և վաղաք սպասված մեծ կարիքին
բաւարարութիւն տալու: Ընթացիկ վիճա-
կագրութիւնը պէտք է ալքի առաջ ունե-
նայ ոչ միայն Ռուսաստանի այս և այն
մասը միայն, այլ ամբողջ պետութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏԻԿԱՆ

ՀԱՅ ՎՐԱՑԱԿԱՆ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Երէկ, մայիսի 23-ին, Թիֆլիսում, պրոֆէսոր
Մարտի մոստաւցուլեւաձե, տեղի ունեցաւ մի
նախնական խորհրդակցութիւն հայ-վրացական
արձանագրութիւնների գիտական հրա-
պարակութեան մասին:

Ինչպէս յայտնի է, Կովկասում գտնվող հնու-
թիւնները վաղուց դարձել են իրանց վրա թէ
եւրոպական ճանապարհորդների և թէ տեղա-
կան հնաւիտների ու բանասերների ուշադրու-
թիւնը: Արձանագրութիւնների խոշոր մասը
ընդօրինակված է և նոյն իսկ հայտնաբերված
զանազան ժամանակներում: Սակայն բոլոր
հրատարակութիւնները միասնական արժէք չու-
նեն և շատ ընթերցանողներ կատարված են
թերի, վարկերից և նոյն իսկ սխալ Գիտա-
կան մարզը հաւատարմութիւն չունէ, թէ ար-
գահանիստ առաջ գրած հրատարակութիւնը բո-
լորովին վստահելի մի գործ է, որովհետեւ փոր-
ձով նա գիտէ, որ մի և նոյն արձանագրութիւն-
ների զանազան պատճենները միմեանցից տար-
բեր են: Այդ մի կողմից, իսկ միւս կողմից
յայտնի է, որ երբեք հրատարակութիւնները թէ
լրակատար չեն և թէ չեն հնարակված գիտ-
նական մշակութեան, չեն ճիշտագրած աշխա-
ր:

Զը պատմէք ինչ որ կը կարդաք... գտե՛ք նե-
ղացողներ լինեն... բաւական է ինչքան ինձ
հալածեցին, օ տեսնում եք— և նա ցոյց տուեց
ինձ իր նիւտ ու կացը:

Եւ խօսք տուեցի ոչ ոքի չասել:
Այժմ նոյնը լինի՞րում եմ ձեզնից, յարգելի
ընթերցողներ, ինչ որ կարդա՞ք ձեր մէջ պահէ՞ք,
ոչ ոքի չը պատմէք, թող ձեր ունին չը նեղա-
նայ:

Վերցրեցի տետրակ № 1, տառ Ա:
Մի քանի նմուշներով գաղափար տաւ ձեզ
թէ ինչ տեսակի բառարան էր այդ խորհրդա-
ւոր բառարանը:

Ա գ է ն ու—գործակալ—ձրիակեր, պարագիտ,
ապրում է զաղաքներում և ամեն տե-
սակի առեւտրական ձեռնարկութիւն-
ների մէջ մասնակից է, հազնվում է
չնորհալի, ունի զաղաք, գրաւիչ ձայն,
զարգացաւ XIX դարի վերջին կի-
սում, փարթաւաքաւ ճգնաժամներից
յետոյ, որում է միամիտների և
կամ շատ հեռատեսների, չըր-
թունքները զաղաք են, բայց թունա-
ւոր Զգուշացէ՛ք նրա համբոյրնե-
րից:

Ա գ ո կ ա տ — դատարանական դիպրոմաւոր
պաշտպան—ամենատարածված մար-
դու մի տեսակ. ունի լաւ չորեր,
փայլուն ցուցանակ դրանք և մի
պօրտֆէլ կուսնը. արտում է օժի-

հագրական, լեզուաբանական, պատմական և
հնագիտական կարեւոր ծանօթութիւններով,
որպէս զի այդ հրատարակութիւններից օգտուո-
ղները հնարաւորութիւն ունենային իրանց
ձեռքի տակ ունենալ անհրաժեշտ նիւթերը և
տեղեկութիւնները:

Պրոֆէսոր Մարտի, Պետերբուրգի Հնագիտական
Թանգանոցովի անունից, առաջարկեց, որ Թիֆ-
լիսում հաստատվի մի մշտական կոմիտէ,
կազմակերպելու կովկասեան արձանագրու-
թիւնների հաւաքման և նրանց մշակութեան
գործը: Այդ առաջարկութիւնը, որ ընդմեջ
նախնական խորհրդակցութեան մէջ, պէտք է
ներկայացվի մի աւելի ընդարձակ ժողովի, որը
պէտք է գումարվի առաջիկայ յունիսի 10-ին
Թիֆլիսում և որին մասնակցելու պէտք է հրա-
ւերվեն այն անձինք, որոնք այդ գործին հա-
մակրում են:

Անխաղած մի այդպիսի գործ աղոթութեամբ
գլուխ բերելու համար անհրաժեշտ են երկու
պայման, այն է մի կողմից գործողներ, արձա-
նագրութիւններ ժողովողներ, և նրանց գիտնա-
կանապէս ուսումնասիրողներ, իսկ միւս կող-
մից դրամական միջոցներ թէ ճանապարհոր-
դութիւնների կատարելու և թէ ժողոված նիւ-
թերը հրատարակելու համար: Անշուշտ ծախ-
քերի մի որոշ մասը կը վերցնէ իր վրա այն
գիտնական հիմնարկութիւնը, որից ըզխում է
առաջարկութիւնը, իսկ մնացած աւելի խոշոր
մասը պէտք է հոգան ունենալ կովկասցիները,
նուիրելով գումարներ այդ գործին համար:
Նուէրները, անկասկած, կարող են յատկացվել
թէ ընդհանրապէս հետազոտութիւններ անելու
և թէ միայն որոշ տեղերի և որոշ հնութիւն-
ների ուսումնասիրութեան համար:

Կոմիտէն պէտք է մշակէ գործունեութեան
որոշ սխեման և ուսումնասիրութիւններ անելու
որոշ ծրագրեր: Գուցէ կարելի լինի այդ գործը
կազմակերպել մինչև աշուն և ամսիկապէս ձեռ-
նարկել գործունեութեան:

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻ

Մայիսի 18-ին
Նոյն օրերից իսկ խոսքը, որ մի երկու շա-
բաթ առաջ տուեց առաջին անգամ Երեւանում
միասնական մտայնի ժողովողական ներկա-
յացում, այսօր քաղաքային կլուբի դահլիճում
առեց երկրորդ ժողովողական ներկայացումը:
Խաղում էին Սոսոքուկեանցի Պէպոն և Վառ-
տարանի մօտ վոլոլիլը:

տով աղջիկներ և չաղ կլիներներ.
ճարպիկութիւնը համարում է տա-
ղանդ և շատախօսութիւնը՝ պերճա-
խօսութիւն. սիրում է թատրոն և
օպերէտ, իր մասին խօսելիս ա-
ռում է լաւագոյն, դիմացիին զրու-
սալում է զաղաքներում և լաւ փո-
ղոցների վրա:

Ա գ ա տ ու թ իւ ռ — մի ջնջող էակ, որ ծնվել և
խնամվել է Ֆրանսիայում մեծ յե-
ղափոխութեան ժամանակ և մեծել
է չորս-հինգ տարեկան. գերեզմանը
անյայտ է. ունի երկու եղբայրներ՝
Հաւասարութիւն և Եղբայրութիւն.
Սրանցից առաջինը ապօրինի ծնունդ
էր, դրա համար էլ ոչ մի կօնսու-
տօրիտ ծննդական վկայական չը
տուեց, ուստի և զաղաքացիական
բոլոր իրաւունքներից զրկվեց և
աքսորվեց, ապրում է անապատնե-
րում և XIX դարի լաւ մարդկանց
երեսկայութեան մէջ. առում են,
մեծ է մահ հիւանդ է... Աւագ եղ-
բայրը—Եղբայրութիւնը աւելի բազ-
դաւոր գտնվեց. նրան պատուում են,
նրա անունով մարդիկ տեղի և ան-
տեղի երգվում են. ձևականօրէն
ապրում է բոլոր կրօնական հիմնա-
րկութիւններում. քանի միմեանց
խաբելու կարիք լինի՝ նա կապրի,

Տեղերի գները այս անգամ աւելի է ծանց-
րած էին, օրինակ վերջին կարգը արժէր 5
կոպեկի, Հասկանալի է, թէ ինչու բոլոր տոմսերը
վաճառվելուց յետոյ շատ շատերը վերադա-
նում էին, չը կարողանալով տեղ ձեռք բերել
դահլիճում: Այս 5 կոպեկանոց տեղը ա. Սիրա-
նոյ զինհատել էր 1 ռուբլի. այդ բանը յիշե-
լով նպատակ ունեւ նկատելու, թէ մեր բե-
մին նուիրված ուժերը յաճախ ինչպէս թա-
րօնի դռները փակում են չունենալ դասակարգի
առաջ: Այս հանգամանքը ի նկատի առած, ա.
Սիրանոյի 11 գեղեցիկ ներկայացումների
թոււմ ժողովողական այս երկու ներկայացում-
ները կարծեք եկան մի բաց ծածկելու,
զրկված դասակարգի մտաւոր կեանքին մի
փոքր անունդ տալու:

Միջակ դասակարգ, արհեստաւորների չըման,
չըաւոր աշակերտներ, մի խօսքով ժողովող
դահլիճում, իսկ բեմի վրա մի գեղեցիկ պիէս
իր ժողովողական տպերով, իր կենդանի գոր-
ծողութիւններով և վերջապէս իր չօգտված
կենսունակ խնդիրներով, իր հաւակացութեան
ներով և բարբերով այնքան համապատասխա-
նում էին միմեանց, որ ներկայացումը անցաւ
բաւական աղոյ, մասնաւոր վերջում, և Պե-
պոն մի քանի թոյլ կատարած տեղերը վոլոլ-
վիլ գեղեցիկ խաղով այնպէս կովկեց, որ
ներկայացումը միասնական գոհացում պատ-
ճառեց նոյն իսկ ա. Սիրանոյի ներկայացում-
ներին սովորած հանդիսականներին: Գովելի
եռանդ, գեղեցիկ գործ:

Այսօր երկրորդ անգամ բեմի վրա տեսնելով
մի քանի խաղացողների, որոնք շատ անգամ
դուրս են եկել բեմ ցոյց տալով չնորձ, հա-
տառապէս կարող ենք ասել, որ եթէ նոր ու-
ժեր և մասնակցողներ նոյն իսկ առաջ գալու
չը լինեն առ այժմ, այս խմբով էլ կարելի է
տարւոյ մէջ գտնէ մի քանի անգամ ժողովողա-
կան ներկայացումներ կազմել, որոնց կատա-
րելը գործը անհամեմատ աւելի մեծ է լինելու,
քան շատ ու շատ գերազանցական խմբերի ներ-
կայացումներ:

Այս ի նկատի ունենալով և գովելով այսօր-
վայ ներկայացումը կազմող տիկիներին, օրերդ-
ներին և երիտաւորների ջանքերը, կը դանկա-
նայինք, որ նրանք հենց այժմեանից հրաւիրէին
աջակցողներ, ընտրէին այդտեղի և կամ ձեռք
բերէին ուրիշ տեղերից և ամեն բան նախօք
հոգալով սեպտեմբերից սկսելին մի շարք այս-
պիսի ժողովողական ներկայացումներ տալ:

Մի նկատողութիւն, որ կաննեք այսօրվայ ներ-

ուրեմի՝ յաւիտեանական է և անմահ:
Ա գ ա տ Ե ռ — խալի և թիւ ապուղ, բուռնում
է ամեն կլիմաներում. մեծ աղգա-
կանութիւն ունի. եղբայր է զալիճ
անհամբերութեանը և կնքահայր՝
հալածանքին. կեղծաւոր է և շատա-
խօս. սիրում է թատրոնայութիւն և
օպերային խմբիչներ: Մեզնում
բուն գրեց Կ. Պոլսում և ապա այն-
տեղից փոխադրվեց 80-ական թուա-
կաններին Կովկաս. դրա լաւ տե-
սակները կարելի է գտնել Թիֆլի-
սում և էջմիածնում:

Ա գ իւ — առաջ կային այդ անուն կրող և
մարդիկ. այժմ գործ է ածվում
թանկագին ձիերի, չնքի և ընդհան-
րապէս կենդանիների ցեղը բնորո-
շելու համար. մեր մէջ, կարծեմ,
մի հատ մարդ կայ այդ անունը
կրող, այն էլ դերասանուհի է:

Ա կ ու մ — հասարակական ժողովարան, ուր
ժամանակ են անցկացնում սիրող
ամուսինները՝ թուղթ խաղալու հա-
մար և անգործները՝ թալանելու. ա-
մենատարածված հիմնարկութիւնն է.
այդտեղ ծախվում է պատիւ և ա-
ռողջութիւնը. անդամների գրական
երկերն են զանազան գրքերի
բազմախառոր ժողովածուն: Անգամ
լինելու համար հարկաւոր է ունե-

կայացման առիթով, այդ ամիս էր, որ այսօր
աւելի քիչ թւով էին ներկայ արհեստագործ
ները զարմանալով դիմարդի, քան ան-
ցեալ անգամը Պէտք է ընդհիշող սկզբունք
դարձնել և խիստ էլ հետեւել, որ որքան կարելի
է ժողովրդական թատրոն յաճախողները պատ-
կանեն ժողովրդի աւելի հասարակ խաւերին:

Ա.—Դօ

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՈՐԴՈՒԹԵԱՆ

Գանձակ, ապրիլի 30-ին

Ձեր թղթակից պ. Ս. Տէր-Աւետիքեանը՝ Բա-
նանց գիւղից գրած թղթակցութեան մէջ,
(«Մշակ»-ի № 81) ի միջի այլոց մի քանի
անարդար խօսքեր է ուղղել Գանձակ քաղա-
քում վերահսակվող բանանցեցիներին հասցէին:

Պ. Տէր-Աւետիքեանի թղթակցութիւնից ըն-
թերցողը այն տարօրինակ եզրակացութեան կը
գայ, թէ իրաւ մենք, քաղաքում վերահսակվող-
ներս, ամբողջ հակառակորդներ ենք մեր հա-
մադրուղիների շահերին, որ մինչև անգամ
հակառակում ենք սայլի ճանապարհներ չի-
նելու ցանկալի մտքին: Պ. Տէր-Աւետիքեանը
մեզ մեղադրում է այն բանի մէջ, որ իբրև մենք
չենք ուզում ճանապարհի շինութեան կոռւի
մասնակցելու, և այդ կոռւից ազատ մնալու
համար, իբրև մենք գանգաւորներով դիմում ենք
արել կառավարութեան, և արգելքներ ենք յա-
րուցել, ընդհատելով աշխատանքը և այլն...

Պ. Տէր-Աւետիքեանին չը գիտեմ ինչի հաճելի
է եղել արդարութիւնը ծածկել, լոկ այն պատ-
ճառով, որ մի քանի անվայել խօսքեր չգրած
մեր հասցէին:

Այդ եղելութիւնը հետեւեալն է: Երբ իշխա-
նութիւնից ստացվում է ճանապարհի շինու-
թեան հրամանը, գիւղացիք բաժանվում են
երկու կուսակցութեան: Մի կողմը յարմար է
համարում սայլի ճանապարհը ձգել «այգի-
ներին» կողմի քարքարոտ ու ժայռոտ դժուա-
րաշէն ճանապարհով, միւս կողմի ցանկու-
թիւնն էր ճանապարհը տանել, «կիսաշէն»
ու ներկայումս արդէն կառու ու սայլ բանելու
յարմար հասարակութեան շինած ճանապարհով,
որ Բանանցի հասարակութիւնը Տէր-Աւետի-
քեանի տանուտէրական օրով մեծ դժուարու-
թեամբ և քրախնք ու փող թափելով շինել է:
Անխտնութիւնն է միանգամայն թողնել այդ
չինքն ու յարմար ճանապարհը ու նորի շինու-
թեան ձեւնամուկ լինել: Այս վերջին կարծիքի
էինք նաև քաղաքում վերահսակվող բանանցե-
ցիներս մանաւանդ այն պատճառով, որ ինչպէս
գործի սկզբում լուրեր էին տարածվել, այս-
գինքներն կողմով անցնող ճանապարհի շինու-
թիւնն եթէ իրազեկվէր, պիտի քանդվէին մի
քանի շինական տներ ու այգիներ: Այդ բանը
աչքի առաջ ունենալով, մենք մի խնդրեք ներ-
կայացիք իշխանութեան, խնդրեք մէջ յա-
կանէ յանուանէ յիշատակելով «Միջ» աղբիւրի
կողմի յարմարութիւնները ու «այգիներին»
կողմի դժուարութիւնները ու անյարմարու-
թիւնները:

Հետեւեալ մեր տուած խնդրեցիքն է կարելի
եզրակացնել, թէ մենք հակառակ ենք ճանապարհ-
ների շինութեան գերեցիկ մտքին:

Ա. Սահակեան

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՈՐԴՈՒԹԵԱՆ

Լալպցիկ, մայիսի 20-ին

Բարեհաճեցէք, խնդրեմ, հետեւեալ երկուող
գրութիւնս ղեկեղծել «Մշակ» համարներից
մէկում:

Նալ լաւ գգեստ:

Աղ աւարեւելեան վիշապ, վաշխառու՝ վաճա-
ռականի շորերով, օրում է չքաւոր-
ներին և յուսահատներին. ճարպիկ,
փորն ուռած և յարգանք ազդող,
զրանց կը պատահէք քաղաքային
դուռմաներում՝ որպէս ձայնաւորներ
և առաջնորդարաններում՝ որպէս
պատուաւոր հիւրեր. օր աւուր դը-
րանց թիւը քանում է և կերպա-
րանափոխվում:

Ամսագիրը—գրական մի ժողովածու, որ
պէտք է դուրս գայ ամիսը մի ան-
գամ:

Առաջնորդ—փափկաէր հոգևորական. հո-
գաբարձութեան նախագահ և դիկ-
տատօր, սիրում է շողջորդներ
և տգէտ տիրացուներ, երազում է
կաթոլիկոսութեան մասին. թիկնա-
պահներն են՝ ազգականները և գոր-
ծակալները. ոտները տակ՝ որպէս
պատուանդան՝ ունենում է աղաներ
(տեւ՝ աղա), քարոզում է Գրիստոս-
սի խօսքերը, որոնց հետեւելու ոչ մի
հնարաւորութիւն չունի. ապրում է
տարին տասներկու ամիս առաջնոր-
դարաններում, և եթէ դուրս է գա-
լիս՝ միմիայն իր ճուր գգեստները
ցոյց տալու համար:

Աղքատ—փող և ընդհանրապէս ոչինչ չունե-

Մօտ ամիս ու կէս արանից առաջ «Մշակին»
հաղորդել էի ի միջի այլոց և մի լուր, որ վե-
րաբերում էր պ. Լ. Աթաբեկեանի ծերերին
համարաւորում տուած արդի քննութեան
Այդ առիթով պ. Լ. Աթաբեկեան «Մշակ» մի-
ջոցով յայտնեց, որ իմ, յարգելի խմբագրու-
թեանը հաղորդած վերոյիշեալ լուրը իբր թէ
«մի չարք» չափազանցութիւններ է պարունա-
կում: Սրանով յայտնում եմ, որ իմ հաղոր-
դածը զուտ իրականութիւն է և բոլորովին
հեռու որ և է չափազանցութիւնից:

Լ. Բարայեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հաստատ աղբիւրից մեզ հաղորդում են, որ
Հոռոմից հեռագիր է ստացվել Թիֆլիսում, թէ
Հեռ. XIII պապը որոշել է հայ թեմական ե-
պիսկոպոս հաստատել յատկապէս Կովկասի
կաթոլիկ հայերի համար:

Պետերբուրգի համալսարանի պրոֆէսոր հայա-
գէտ Ն. Մարր եկւո Վովկաս մի քանի հետա-
զոտութիւններ անելու նպատակով Նա մնաց
Թիֆլիսում մի օր և ուղևորվեց դէպի Օդես-
զէթի գաւառը: Յունիսի 10-ին նա կը գայ
նորից Թիֆլիս և մի քանի օր այստեղ մնա-
լուց յետոյ կուղևորվի Էլմիսին, որտեղ պէտք
է 10—15 օր դադարի մի քանի ձեռագիրների
ուսումնասիրութեամբ:

«Кавказ» լրագրում կարդում ենք. «Մեզ
հաղորդում են, որ կայսերական հնագիտական
մասնագիտողը, ծանօթանալով Պետերբուրգի
համալսարանի պրոֆէսոր Մարրի կողմից ա-
ռաջարկված ծրագրի հետ՝ հրատարակելու հայ-
կական և վրացական հին արձանագրութիւն-
ների մի ժողովածու՝ կատարեալ հաւանու-
թիւն տուեց յիշված ծրագրին, լիակատար
պատրաստականութիւն յայտնեց իր վրա վերց-
նելու այդ գիտական ձեռնարկութեան իրա-
կանացումը և որոշեց պրոֆէսոր Մարրին յանձ-
նել գործի գլխաւոր ղեկավարութիւնը, որ
պահանջում է շատ անձերի աշխատակցութիւն
Այս նպատակով կայսերական հնագիտական
մասնագիտողը ուղևորվում է Կովկաս պրոֆէ-
սոր Մարրին և նրա մերձաւոր աշխատակից-
ներին՝ հաւաքելու և արտագրելու յիշված ար-
ձանագրութիւնները, ինչպէս նաև կազմելու
Թիֆլիսում առանձին խորհրդակցութիւն տե-
ղական գիտականներից նոյն նպատակով:

Ռուսաց կայսերական աշխարհագրական ըն-
կերութեան խորհուրդը ուղարկում է դէպի
Նրեանեան և Գանձակի նահանգները յիշված
ընկերութեան առաջաւորաւորներին, Իւրեմի
համալսարանի բուսականական աղետ ղեկեղ-
տօրի օգնական Բոլեւով Գրիգորիեւիկան գիտ-
նական նպատակով:

Երկրագործութեան և պետական կալուած-
ների միմիատրութիւնը քննել և հաւանութիւն
է տուել այն ծրագրին, որ մշակել է միմիատ-
րի կովկասեան լիազօր Սիմփիէնի և որ վե-
րաբերում է արձանի հողերի վրա ապրող
գիւղացիների դրութեան բարելոման գործին:

ցող մարդիկ. խէք զրանցից երեւա-
կայութիւնը, որով միայն դրանք
ապրում են, և դուք կը ստանաք
զերօ. զրանցից դուրս են գալիս
մուրացկաններ, գորգներ, բանաս-
տեղծներ, ինչպիսիքներ են այն բո-
լոր մարդիկ, որոնք փշի պէս ցցված
են մեր առաջին, փչացնում են մեր
ախորժակը և խանդարում մեզ վա-
յելիլու կեանքը. սերված են գրքե-
րում, ապրում են, ուր կայ տգի-
տութիւն և հարստութիւն:

Արարատ—Սրբազան օտար Անդրկովկասում
և կրօնական ամապիր էլմիսինում.
լեաւոր կրակ էր արձակում, ամա-
գիրը՝ զուրկ է կրակից. լեաւոր վեհ
է, գեղեցիկ և հետաքրքիր—ամա-
գիրը դուր հակառակն է. միակ նը-
մանութիւն այդ երկուսի մէջ—ան-
չարժութիւնն է:

Արասի անհետ—տեւ՝ «Նեալադային» հիւան-
դութիւն, «Հանքաբանութիւն», «Ե-
րազ» և «Հայկական» էնցիկլոպեդիան
յօդուածները:

Արմենիա—աշխարհագրական անուն մի երկ-
րի, ուր մի ժամանակ ապրում էին
հայերը. այժմ զիջումատների հա-
մար բառախաղ, միտմաններ թե-
մա, Թիւրքիայի գիտնորական խա-
ղերի պլաց. բնակեցրած է Հայմի-

Ֆինանսների միմիատրութեան մէջ եղած տե-
ղեկութիւններով, 1896 թւականից սկսած
մինչև 1903 թւականի յունվար ամիսը Ռու-
սաստանում բացված են 149 առևտրական ու-
սումնարաններ, որոնցից այժմ գոյութիւն ու-
նեն 147. Նրանց մեծամասնութիւնը բացվել է
տեղական միջոցներով, առանց որ և է մաս-
նակցութեան արձանի գանձարանի կողմից:
1903 թւականի սկզբին բոլոր 147 առևտրա-
կան ուսումնարաններում աշակերտների թիւն
էր 32,251, իսկ դասարանների թիւը—2,180:
Այդ ուսումնարանները չափազանց անհաւասար
են բաժանված Ռուսաստանի զանազան շրջան-
ներում: Ամբողջ Միբրիայում և Միջին Ասիա-
յում կայ միայն մի ուսումնարան, այն ինչ
Պետերբուրգի շրջանում նրանց թիւը հասնում
է 58-ի:

Թիֆլիսի աղբգործական ուսումնարանի
տարեկան հաշիւից երևում է, որ անցեալ տա-
վայ ընթացքում աշակերտների թիւը այդ ու-
սումնարանում եղել է 41, որոնցից հայեր—
18, վրացիներ—16, ռուսներ—5, թուրք—1,
լեզգի—1: Ուսումնարանը նոյն տարվայ ըն-
թացքում մուտք ունեցել է 16,750 ռուբլի,
իսկ ծախք—16,750 ռուբլի 13 կօպէկ: Ուսում-
նարանը ունի 1,587 ռուբլի պարտք:

Հիւանդ չքաւոր օրիորդի օգտին ստացանք պ.
Լևոն Մեդեանից 7 ռուբլի 50 կօպէկ, որ ժո-
ղոված է Թամաշիկի քարվասարայի վաճա-
ռականների շրջանում:

Այս գարնան տեղի ունեցաւ Պարիզի յայտ-
նի գեղարուեստական ցուցահանդէսը, որ կոչ-
վում է Les salons de la société nationale des
beaux arts: Մեր ձեռքը հասած «Figaro Illus-
tré» մայիսի ամբողջ համարը նուիրված է այն
ցուցահանդէսին, ուր յայտնի գեղարուեստա-
կան կրթիկոս Maurice Hamel իրան յատուկ
բանիմացութիւնով պատկերացնում է այս
տարվայ ցուցահանդէսի գործաւոր և թոյլ կող-
մերը: Նոյն ընթացք է նախ Փրանսիական նկա-
րիչների սանդղագործութիւնները և յետոյ
անցնում է՝ օտարազգի ներկայացուցիչներին,
որոնք բաղդ են ունեցել ընդունվելու այդ
ցուցահանդէսում: Այդ վերջին ընթացքի
չարքից մենք կը բերենք այստեղ յիշեալ յօ-
դուածի հետեւեալ կտորը. «Հայաստանն էլ մեզ
պարզեւէլ է մի նոր և ինքնուրույն տա-
ղանդ: Օրիորդ Արմենուհի Բաբայան ի ցոյց
է դրել մի պատկեր, որ ներկայացնում է մի
տիկին՝ իր բոլոր զգացումներով տրված ըն-
թեք անուշութեամբ Այդ պատկերը՝ աչքի
նրբութեան և անուրախութիւնի գագաթնակէր
ար-
աայայտութիւն է: Լուում ենք, որ օրիորդ Բա-
բայանի երկրորդ պատկերն էլ նոյն ցուցահան-
դէսում զրված՝ ուրիշ Փրանսիական լրագիր-
ներում շատ գովեստների է արժանացել: Այս
օրերս էլ օրիորդը ցուցահանդէսի ամբողջ
Jurys-ի կողմից ընդունված է Saloni-ի ընկե-
րութեան անդամակցութիւն. Associée, որ մեծ
պատիւ է ամեն մի երիտասարդ նկարչի հա-
մար:

դիէ՝ ջրղական զօրագնացիքով. բեր-
քի՝ որբեր, այրիներ և արտասուք:
Աւելացրէք վերջին մի ճն» և կը
ստանաք մի հայ դերասան, որը
միշտ և ամեն տեղ խաղում է
«Պուտարի» փեսան:

Արծաթ—արծեղաւոր և ծանր քաշող մետաղ-
գործ է անվում մարդկանց կշիռն ի-
մանալու համար: Երեսուն հատով
կարելի է ծախել Գրիստոսին և խաչ
հանել նրան. այժմ գործածութիւ-
նից դուրս է գցվում և դրան փո-
խարկում է ուկրին և կեղծիքը.
սիրված է ստորին պաշտօնեաներից
և հոգեւորականներից մինչև վարդա-
պետի աստիճանը:

Արմաւիկ—Ձեռքեղաւոր գիւղ. ունի էլէք-
տրական լուսաւորութիւն և Վեդարք
Տարածութիւնը ֆիրմա. վախճանում է
քաղաք դառնալուց և քահանաների
անէծքից, պարծենում է բնակիչնե-
րի տգիտութեամբ և հարուստ հարս-
նացուների չառնութեամբ. բերք՝ ա-
ռևտրական մասնկութիւններ. եղա-
նակը փոփոխական է, որպէս խա-
նութիւնի ցուցանակները:

Ամուսին—ձանձուրութիւն—օրինաւորութեան
մարկա. ապրում է վկայականների
մէջ և մերթ մերթ ամուսնների
բերաններում. սիրում է ամառա-

ՇՈՒՇՈՒԹ մեզ գրում են. «Այստեղի թիւ-
քաց թաղում մի տեսակ հիւանդութիւն է ե-
րկացել: Մահվան են ենթարկվել երկու հա-
րիւրից աւելի ծննդաբեր կանայք. ինչին վե-
րագրել պատճառը. արգեօք թիւք տատմէր-
ների անզգուշութեան:

ԿԱՐՍԻԹ մեզ գրում են. «Դարձեալ կար-
կուտ... երկինքը խեղճ գիւղացու դառն աշ-
խատանքը իսպառ ոչնչացնելու մտադրութիւն
ունի, կարծէք: Երկարատեւ և խիստ ծանր ձմեռ-
վանից յետոյ՝ այստեղ եղանակները չէ թէ
ամուսնաւոր կամ չարթէ-չարթթ, այլ օրէ-օր
ու ժամէ-ժամ փոփոխվում են: Ոչ ոք չէ կա-
րող գուշակել, թէ մի ժամից յետոյ եղանակը
ինչպէս կը լինի: Այս վերջին օրերս էլ երկին-
քը սև ամպերով է ծածկված և շատ հագիւ է
պարզվում: Երէկ, մայիսի 20-ին, ցերեկվայ
օտ 2 1/2 ժամին ամպերի անեղ որոտումից
յետոյ՝ սարսափելի կարկուտ տեղաց, ուժեղ
հարուածներով: Մօտ տաս րօպէ տեղալուց
յետոյ՝ գետինը սպիտակեց, կարծէք ձիւնի բա-
րակ շերտով լինէր ծածկված: Դժուար թէ այդ
կարկուտը միայն հարսում եկած լինի և մնաս
տուած չը լինի գոնէ մօտակայ գիւղերի ար-
տերին: Երէկվայ ժամանակն է, որ այս տողե-
րը գրում եմ, երկինքը էլի սևացած է, ամ-
պերը որոտում են, եթէ ոչ կարկուտ գոնէ
անձրև տեղալու տրամադրութիւն կայ: Գոնէ
քաղաքացիներին համար անձրևը լաւ է. ով չէ
լսել հարսի նշանաւոր փոշոտ փողոցների մա-
սին: Մաքուր օդ չնկելու բախտից զուրկ ենք:

ՏՆՂ գիւղից (Չանգեղաւոր գաւառ) մեզ գը-
րում են. «Մայիսի 16-ին, գիշերվայ ժամի 12-ին,
մեր և չրջակայ գիւղերը ենթարկվեցին բնու-
թեան սարսափելի աղէտին: Անողորմ կարկու-
տը ոչնչացրեց գիւղացիների մի ամբողջ տա-
վայ վառարկը: Բոլոր արտերը, ծառայաւոր-
ները, խաղողի այգիները, բանջարատնոցներն
էլ այն ամենը, որից գիւղացուն յոյս ունէր օգտ-
վելու: Առաւօտեան, մայիսի 17-ին, ժողո-
վուրդը զարթնելով քնից՝ միանգամից յուսա-
հատված տեսաւ ամբողջ Տնղ գիւղն իր դաշ-
տերով սպիտակ կարկուտի սաւանով ծածկ-
ված: Բարձրացաւ մի ընդհանուր սուգ. հար-
կուտի գնդերն այնքան խոշոր են, որ տեղիս
ծերունիների ասելով այդպիսի բան չէր տեսն-
ված: Կարկուտը մի ամբողջ օր առանց հալչե-
լու մնաց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԱՅԻ ԿԻՆԸ ԵՒ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱ-
ԿՈՒՆԻՔԸ
(Նամակ Գերմանիայից)

Առաջ, մի քայլ ես առաջ, և իրաւ ամենա-
կարեւոր քայլը... Շարունակ այդ կոշն է ուղ-
ղում գերմանական կանանց ընդհանուր կենտ-
րօնական մարմինը իր հետաւոր ծայրերին՝ մի
այնպիսի բարեպաշտեմ ժամանակ, երբ արա-
կան իրաւաւորված սեռը իր օրէնագիր մար-
մինը վերակազմելու ջանքեր չէ խնայում,
չափազորված դատակարգային խանդով:

նոցներ և դերասանական արուեստ.
ունի վատ յիշողութիւն և լաւ ճա-
չակ: Մաքուր է կղզեմայրերից հագ-
ւագիւտ են—ուստի և ուսումնասիր-
վում են հնագէտների և բարոյա-
խօսների կողմից:

Աւազա կ—ժամանակի ամենապատշաճ մար-
դը. շատ ժողովրդական. խօսում է
միշտ ազնուութեան անունից, ապ-
րում է անտաններում և հարուստ
քաղաքներում—երբեմն չեղբեկայով
և հրացանով, երբեմն ֆրակով և լաւ
պաշտօնով: Անդրկովկասում ամենից
շատ տարածված է Ղուբայի գաւա-
ռում և Բազու-Բախլանի մէջ:
Ենթերին լաւ ընդունելութեամբ դուրս
են եկել բազմաթիւ կեղծիքներ.
Չգուշացէք:

Երբ թերթից բարտարանի առաջին տետրը
և ձեռքս մեկնեցի երկրորդին—ծերունի լիտերա-
տոր թոյլ չը տուեց:

—Այդ էլ մի ուրիշ անգամ, ասաց նա, և ժո-
ղովից բարտարանի տետրակները:

Ընթերցող, եթէ ոչ ոք չը պատմես առաջին
տետրակի մասին, ես քեզ երբ և էցէ կը ծա-
նօթացնեմ վատաստեմ ծերունու կազմած «բա-
նարան» նաև միւս տետրակների հետ:

Ստորագիշտ

ՅԱՅՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԴԱՆՈՅ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վարդգեսի արձանի հանդէպ)

Ամեն օր բացի կիրակի օրերից
ԱՌԱՌՈՅՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. փրարումութեան, փնտրական (սիֆիլիս) և միզառեւ. հիւանդ.
ՅԱՅՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդալիս.
Մ. Գ. ԱՌԵՑԻՍԵԱՆ—10—11 ժ. մարմնի, փնտրական և փրարումութեան.

Զ. Բ. ՌԱԶԱՆՍԵԱՆ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայից հ.
Կ. Բ. ՊԱՆԻՍԵԱՆ—12—1 ժ. ախտի, թքի և կուրքի հ.
Բ. Ա. ՌԱԶԱՆՍԵԱՆ—1—11/2 ժ. ներքին և երեխայից հ. երեխ. շարք. ուրախ.

Մ. Գ. ՎԱՐԴԱՆՍԵԱՆ—1—11/2 ժ. ներքին և երեխայից հ. երեխ. հիւանդ. շարք.
Բ. Բ. ՊԱՆԻՍԵԱՆ—1—11/2 ժ. ներքին և երեխայից հ. երեխ. հիւանդ. շարք.

Ն. Ն. ՌԱՅԻՍԵԱՆ—5—6 ժ. փրարում. և մարմնի. (էլեկտրաբարձ.)
Գ. Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ. նեարդալիս (էլեկտրաբարձ.) ներքին և փնտրական հ.
Կ. Բ. ՊԱՆԻՍԵԱՆ—7—11/2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.

Գ. Բ. ՌԱԶԱՆՍԵԱՆ—7/2—8 ժ.
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—7/2—8 ժ.
Վարձ 50 կ. շաբաթները ձերի համախորհրդի (հոնորարի) և օպերացիայի համար առանձին.
Զ. Բ. ՌԱԶԱՆՍԵԱՆ—առանձին. ծաղկահատ և բժշկական մարմնավարդ. գինը 11—1 ժ.

Հիւանդանոցի վերահսկող
Բժշկագետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՆԱՐԱՐՈՒՄԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

արանով յայտարարում է, որ իր ատենական ցերեկվայ 1 ժամին 1903 թվ. մայիսի 23-ին, նշանակված է երկրորդ անգամ կապարով տալու քաղաքային հողաբաժնիներ ոչ հետա նաւթիլու կիսակայարանից՝ նաւթային պահեստներ չինելու համար: Յանկացողները կարող են տեսնել պայմանները և նաւթային հողաբաժնիների պլանը Ուլարովայի 4-րդ բաժանմունքում բոլոր լի օրերը առաւօտեան 9 ժամից մինչև ցերեկվայ 2 ժամը: Անուրդին մասնակցել ցանկացող անձինք պարտաւոր են աճուրդի օրը ներկայացնել 300 ռ. գրաւական: Կարելի է յայտարարութիւններ տալ և կնքված ծրարներով մինչև անուրդի սկիզբը: 1—2

Լոյս տեսու և վաճառում է

ՄԱՐԻԱ ԿՈՐԵՆԻԻ

„ԲՆՐԵԲԵՐԸ“

Գրատուի ժամանակակից վէպը
Թարգմ. Ալեք. (Արտակ) Տէր-Սարգսեան Պարզանցի

Գինն է 1 ռ. 50 կ.

Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառներին և Ալեքսանդր Պարզանցին՝ Нахичевань, Эрив. Կրծ. 3—3

Բ Ժ Ի Ծ Կ

Գ. Մ. ԱՓՐԻԿԵԱՆ

կազմում է խորհուրդներ տեղին պրոֆէսորներին հետ՝ Վերնա եկող հիւանդների համար:
Dr. Med. Paul Afrikian. Wien. VIII., Langegasse, 60, Thur 1. (2.) 17—35

Բ Ժ Ի Ծ Կ Ա Գ Ե Տ

Տ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ

Նախկին օրդինատոր Ա. Պետերբուրգի Ալեքսանդրական Հիւանդանոցի
ԱԶԳԻ ՀԻՄՆԴԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ
Հնդուում է աչքի հիւանդութիւն ունեցողներին ամենամ օր.

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան 5-ից մինչև 7

Հասցէն. Վերամիսօվայա փ. ա. № 8:

10—10

ԲԺԻՇԿԱՆ ՍԻՆԻՍՏՐԱՆՏ

Հնդուում է մասնաւորապէս սիֆիլիս, մարմնի և փնտրական ախտ ունեցող հիւանդներին Բիւրիկ-Միկրոսկոպիական կաթիլներ, օրաւոր ընդունվում են կաթիլ, խորխի, մէլի և արեւան անալիզներ:

Առաւօտեան 11—1 ժ.

Երեկոյեան 4—6 ժ.

Բերաւօվայա փողոց № 41. առան Արաբաշեանի: Бобутовская ул. № 41. Домъ Арабаше. 92—150

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

ՍՈՖԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՓԱՆԵԱՆՏ

Հնդուում է հիւանդներին ամեն օր առաւօտեան 9—2, երեկոյեան 4—7, իսկ կիրակի օրերը, առաւօտեան 10—12 ժամին Վերամիսօվայա փողոց № 3:

Ներքին հիւանդութիւնների մասնաւոր
Բ Ժ Ի Ծ Կ Ա Գ Ե Տ

Ա. ԲԱՆԱՆԵԱՆ

այս ամառ ընդունելութիւն կունենայ ՊԵՍԻՍԻ-ԳՐԱՎՈՐԻ և ԷՍՍԷՆՏՈՒԿԻ: 1—4

Հ Ր Ա Ի Է Ր

Ամսին 25-ին, առաւօտեան ժամը 10-ին, նշանակված է Գաթուղիկէ ս. Աստուածածին եկեղեցու ծխականների ընդհանուր ժողով, մայիսի 11-ին չը կայացած ժողովի փոխարէն: Ժողովի պարագումունը առարկաները հետեւեալներն են. 1) երեցիկի հաշիւը սկսած 1902 թվ. յուլիսի մէկից մինչև 1903 թվ. յունվարի 1-ը. 2) 1903 թվ. նախաշաշիւը. 3) նախկին երեցիկի Բայանդուրեանից եկեղեցւապետական գումարների պահանջները հարցը. 4) չաւար ծխականներին խնամելու հարցը. 5) մի քանի տնտեսական խնդիրներ:

Երեցիկի Յովսէփ Ամիրխանեանց 1—2

ԳՈՒՍՏԻՆԵՐԻՆԳ քաղաքային վաճառում է

Մ. ՊԵՆԵԱՆԵԱՆԻ

Տ Ա Ղ Ե Ր

Հեղինակի պատկերով և Լ է օ թ առաւարանով: Գինն է 40 կոպէկ:
Դիմել. Книжный магазинъ „Гуттенбергъ“ (Дворцовая). 2—3

Տ ա ա գ Ր Վ ու մ է

ԱՇՈՏ ԵՐԿԱՐ

Պատմական վէպը, երրորդ տպագրութեամբ: Գինը մէկ ռուբլի: Մինչև լոյս տեսնելը գումարով գնողներին նշանակուող զիւլուսին Դիմել հեղինակին՝ Тифлисъ, Баграту Айвазянцу. 2—2

Իւրաքանչիւր գրաւորանի վրա պէտք է լինի

Գաղի միջոցով վաճառող

„ՀՐԱՇԲ“

մոմը, որ ունի զօրեղ լոյս սկսած 50 մոմի լոյսից մինչև 300 մոմի լոյսը:

Ունի արեւի լոյսի յատկութիւն. այրվում է առանց ապակու իր յատկութեամբ գերազանց է էլեկտրական լոյսից: Միանգամայն անվտանգ է: Նրա հետ վարվելու եղանակը շատ պարզ է: Մարմը մի ժամում 1 կոպէկից աւելի չէ:

Գինը 8 ռուբլի է:

Վ Ա Յ Ա Ռ Վ Ո Ւ Մ է

Կ. ԲՈՒԼԵՎԻ ՄՈՏ

Թիֆլիս. Ալեքսանդրեան այգու հանդէպ. Երանդ-Օտէր հիւանդոց կողքին: 3—3

Հ Ր Ա Ի Է Ր

Մայիսի 25-ին, կիրակի, ա. պատարագից յետոյ, ժամը 12-ին, Վանքի մայր եկեղեցւում ժողով է լինելու ընդունելու հողեր կոչման մէջ Թիֆլիսի քաղաքային Սարգիս Բառնիկեան Արխանանցին նոյն եկեղեցւում սպասաւորութեան համար, ուստի մեծ. պ. պ. ծխականները հրաւիրվում են յիշել եկեղեցին՝ ժողովին մասնակցելու համար:

Գործակալ Գր. Զահ. Մանդակունի 2—2

ՋՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ

Վէպ Պարկաստանի կեանքից

Շ Ա Հ Ր Ա Ր Ի

ԳԻՆՆԵ ՄԷԿ ՐՈՒՐԻ

Մարվում է. 1) Թիֆլիսում՝ Բենտրոնական և Գուտտենբերգ քաղաքային խնամակալութիւնում, 2) Բազում՝ Պրոմէթէոս քաղաքային խնամակալութիւնում: 2—10

Մ. ԽԱՐԱԽԱՆԵԱՆՏ

ԱԳՐՈՆՈՍ

Մասնագէտ գիւղատնտեսական զանազան ճիւղերի, ուսած ծրարային Մօսկէիէ քաղաքում. և առաւել կատարելագործած այգեգործական և զինքործական մասնաճիւղերը, պաշտօն է խնդրում մասնաւոր կարգաձեւում: Դիմել Մշակի խմբագրութեան: 9—5

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Հնկերութեան Վարչութիւնը

արանով յայտնում է, որ այս տարվայ մայիսի 27-ին, երեկոյեան ժամը 8-ին, Հնկերութեան գրասենական նշանակված է անուրդ, հանգուցեալ իտաղեանի Հնկերութեանը կտակած 5-րդ քաղաքային ԵՄԼՆԱՅ փողոցում գտնված քարավանատան կապարով տալու հետեւեալ պայմաններով. քարավանատան տրվում է 3 տարի ժամանակով և կապարառուն, իբրեւ գրաւական, 2 ամսվայ կապարավարձը պէտք է վճարէ առաջը: 1—2

ՀԱՅ ԾՆՈՂՆԵՐՈՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՈՐԹԻԿ ԴՊՐՈՑ

Լ Օ Ջ Ա Ն, Ջ Ո Ւ Ե Ց Ե Ր Ի Ա

Երկրորդ տարի

(16-րդ ամսամէկն օկտեմբ. ձմեռուան վեցամսեային դասերը կը սկսին օկտ. 1/14-ին)

Արեւելեան կամ հայկական դպրոցը կընդունի 10-էն 20 տարեկան աշակերտներ, որոնք, կուտայ, ծնողներու թաղանթին համեմատ, գիտական, գրական, տնտեսական կամ արդիւնաբերական առողջ ու հիմնաւոր կրթութիւն՝ ներգաշնակօրէն և անոր կերպով միացած աշխարհին հիմնական դաստիարակութեան հետ: Մեր հայ սաներուն կուանդնը, և այս առաւել ու է մասն ամ օր վճարում, հայոց լեզու (ուսումնայ և տնտեսայ բարբառ), մատենագրութիւն հայոց (հին և նոր), հայոց պատմութիւն և այլն: Ռուսահայ աշակերտները կարող են նաև ուսանել ռուսաց լեզուն:

Դպրոցի տարեթուակը, հալառակ իր ընծայած բազմաթիւ իրական առաւելութիւններուն, անօրինակ կերպով չափաւոր է:—Հիւանդանոց կանաւ:—Դպրոցի յայտագիրը ամեն ուղղի կը դրկուի:

Տնօրէն՝ Մ. Նալբանդեան, ղօկա. գիտութեան՝ պրիվատ-դոցենտ

1) Longeraie, Lausanne, Suisse 22—27

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԼԱՐՈՐԱՏՈՐԻԱ

Գ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆԻ

Դոկտոր քիմիական գիտութիւնների

Հնդուում է ամեն տեսակ նիւթերի և հանքերի աւալի զննելու (որակական և քանակական):

Հանքերի մանրամասն ուսումնասիրութիւններ և հետախուզութիւններ:
Դիմել հետեւեալ հասցէին. Докторъ Г. Пастернаджіанъ. Вельяминовская ул., 19. ТИФЛИСЪ. 8—10

ՄԻ ՖՐԱՆՍԻԱՏԻ,

որ լաւ գիտէ ուսուցիչ տալիս է ֆրանսերէն, գերմաներէն և անգլիերէն լեզուների դասեր, շատ ձեռնառու պայմաններով: Հասցէն՝ Միլայ-Լուկի պրոպէկտ, ա. Մակկերի, № 180, ընակ. 5:

(ե. հ. շ. կ.) 4—4

ԱՍԱՄԻ ՈՒ ԲԵՐԱՆԻ ՀԻՄՆԴԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Բ Ժ Ի Ծ Կ

ԱԼ. ՄԱՅՈՒՐԵԱՆ

ՇՈՒՇՈՒՄ

սկսում է հիւանդների ընդունելութիւնը մայիսի 10-ից: 7—12

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն Ա Պ Ե Ժ Պ Ա

Ժողովին, գեղաստիւն և ցամաքային ապահովագրութեան, ապահովների տեղափոխութեան և քաղաքի կրակից ապահովագրելու համար:
ՀիՄՆԱՄ է 1847 ԹԻՒՆ

Հիմնական գրամագուլար 1,650,000 ռուբլի
Պաշտամուրդ գրամագուլար 2,664,808 >

Լ. Ա. Գ. Ր. Ա. Գ. Ե. Բ. Ի. Տ. Ե. Ա. Փ. Ո. Ի. Բ. Ի. Ե. Լ.

Աւելի քան 300 գործակալութիւններ և քաղաքային իրաւաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի և հասարակ Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս և ներկայացուցիչներ արտասահմանի դիտարկող քաղաքներում:
Տեղափոխութիւն ամեն տեսակ ընդունելի և իրերի, որոնց ընդունելութիւնը և յանձնումը կատարվում է թէ՛ ամեն և թէ՛ պահանջներում ու իրաւութիւնում:
Շանձնաւում բնակների ուղարկվողների կողմից առաջարկված պայմաններով (վերադարձ շաբաթներ և հաշիւ, ուղարկվողների, դասի փոխադրութիւն (ՍԵՐՅՈՎԵ) բնակները յանձնելու տեղը հասցնելու համար և այլն):
Ապահովութիւն բնակների ապահովումը պայմաններով առաջման տեղերում՝ ապահովագրելով նրանց պահանջներում, օրի համար շատ կէտերում կան ընդարձակ պահանջներ, յատկապէս բնակների պահելու համար:

II. Ն Ա Ի Ա Գ Ե Ա Ց Ո Ւ Բ Ի Ե

Սեփական մարդատար, ապահովագրող և ձգող շաղկապներ, ժողովին և գեղաստիւն նաւեր (70 նաւ):

Բնակները և մարդատար նաւերի պարբերական կազմակերպութիւն Վոլադ քաղաքի բոլոր նաւահանգիստների մէջ, Րիբնիկից մինչև Աստրախան և Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչև Պարսկաստանի ափերը:
Ամենաքաղաքային պահանջներ Նիժնիում (սիբիրական նաւամատուցի վրա), Աստրախանում, Բազում և Կրասնովոդսկում:
Բնակները անընդհատաբար ուղարկելու համար ընկերութեան շաղկապներով կապաւորվում է կապի երկաթուղիների հետ: Այն ապահովների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան և Պարսկաստանից Ռուսաստան, զոյաւթիւն ունի առանձին, բազմաթիւ առօրինակներով, համաձայնութիւն Պարսկական ապահովագրական և տեղափոխութեան ընկերութեան հետ:

III. Ա Գ Ա Ն Ա Վ Ա Գ Ե Բ Ի Ե Լ Գ Ր Մ Ե Լ

ա) Ապահովագրութիւն բնակների, որոնք տեղափոխվում են թէ՛ ցամաքային և թէ՛ ծովային նաւագործներով (ծովային և դեղերով):
բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գոյքերի:
գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ գործող գէղերից ճանապարհին ամեն տեսակ նաւերի, շաղկապների, առաքատանակների, վազոնների և վազոն-ցորենների:
դ) Ապահովագրութիւն թանկարժեք իրերի և արժէքաւոր լիթերի, որոնք ուղարկվում են պատմով, ցամաքային և ծովային նաւագործներով, համաձայնութիւն պայմաններով կապի երկաթուղիների մէջ:
ե) Ապահովագրութիւն ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ:
Բայց տեղափոխութեամբ պարագայ գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի ուրիշ 350 գործակալութիւններ:
Ս. Պետերբուրգի շաղկապներ ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ապսթոլայեցիի պրոպէկտ վրա, № 10-րդ տանը:
Լիւբոյեկ-Շաղկապներ շաղկապներով կապաւորվում համար Բազում, գեղաստիւն շաղկապներով կապաւորվում համար՝ Նիժնի-Նովոգորոդով:
Թիֆլիսի գործակալութիւնը՝ Վոլոգդայի փողոցի վրա, վրաց աղանակների տանը, Յիւլիոսի № 103 (ե. հ. կ.) 82—120